ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՆՏԻՏՈՒՏԸ ԿԱՅԱՆԱԼՈՒ ԽՆԴԻՐ ՈՒՆԻ. ԴԵՌԵՎՍ ԲԱՑԱԿԱՅՈՒՄ Է ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ. ՆՈՐԱՅՐ ՆՈՐԻԿՅԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ ՓԱՍՏԻՆՖՈՅԻՆ

02.05.2016 10:17

Եթե դատապարտյալն արդարացվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային կից թիվ 7 Արձանագրության 3 հոդվածով նախատեսված պայմաններում, ապա ինչ իրավունքներ ունի նա իրեն պատճառված ոչ նյութական վնասի հատուցում պահանջելու առումով: Ինչո՞ւ է օրենսդիրը «դատապարտյալ արդարացվածին» առանձնացրել: «Փաստինֆո»-ի խնդրանքով պարզաբանում է փաստաբան Նորայր Նորիկյանը:

«Բարձրացված հարցադրումը բավականին տարողունակ է և շոշափում այնպիսի կարևորագույն ու հիմնարար խնդիր, ինչպիսին է «Բարոյական վնասի հատուցման ինտիտուտը»:

Նախևառաջ ցանկանում եմ ընդգծել, որ այն, ըստ էության, թե՛ նոր և թե՛ մինչ այդ գործող ինստիտուտ է՝ որոշակի վերապահումներով հանդերձ:

Որպեսզի հասկանանք, թե ինչի մասին է խոսքը, անհրաժեշտ է մեջբերել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային կից թիվ 7 Արձանագրության թիվ 3-րդ հոդվածը, համաձայն որի՝ եթե որևէ անձ վերջնական դատավճռով մեղավոր է ճանաչվել քրեական հանցագործություն կատարելու մեջ, և եթե հետագայում նրա նկատմամբ կայացված դատավճիռը չեղյալ է հայտարարվել, կամ նա ներման է ենթարկվել այն հիմքով, որ նոր կամ նոր բացահայտված որևէ փաստ համոզիչ կերպով ապացուցում է դատական սխալի առկայությունը, ապա նման դատապարտման հետևանքով պատիժ կրած անձը փոխհատուցում է ստանում տվյալ պետության օրենքին կամ պրակտիկային համապատասխան, եթե չի ապացուցվում, որ ժամանակին այդ փաստը չբացահայտելը լիովին կամ մասամբ կախված չի եղել տվյալ անձից:

Այլ կերպ ասած՝ անձը, որը մեղադրվել է քրեական հանցագործության կատարման մեջ ու դատապարտվել ազատազրկման, սակայն հետագայում արդարացվել է կամ նա ներման է ենթարկվել այն հիմքով, որ ապացուցվել է դատական սխալի առկայությունը, ունի հատուցում ստանալու իրավունք:

Հարցերի հարցն այն է, որ անձն ունի իրեն հասցված ոչ նյութական վնասի հատուցման իրավունք, և այդ իրավունքը պետք է կարգավորման ենթարկվի օրենսդրությամբ:

Ավելին, այս իրավունքի հետ արդարացիորեն անմիջականորեն շաղկապված է նաև հետադարձ պահանջի իրավունքը, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինը կամ այն մարմնավորող պաշտոնատար անձինք կհատուցեն իրենց որոշման, գործողության կամ անգործության հետևանքով պատճառած վնասը, եթե հիմնավորվի նրանց մեղքը:

Այս ինստիտուտի ներդրման ճանապարհին առանձնակի կարևորում եմ ՀՀ սահմանադրական դատարանի ներդրած ջանքերը:

2013թ. նոյեմբերի 5-ի թիվ ՍԴՈ-1121 որոշմամբ, ՀՀ սահմանադրական դատարանը, քննության առնելով «Քաղաքացի Արթուր Խաչատրյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, որոշել է, որ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը, այնքանով, որքանով բարոյական վնասը չի դիտում որպես վնասի տարատեսակ և չի ապահովում բարոյական վնասի փոխհատուցման հնարավորություն՝ արգելափակելով անձի՝ դատարանի մատչելիության և արդար

դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը, միաժամանակ խոչընդոտելով ՀՀ միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարմանը, ճանաչել ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասին, 16-րդ հոդվածի 4-րդ մասին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին, 43-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող և անվավեր:

Թեև այն հանգամանքին, որ սահմանադրական փոփոխություններով հիշատակված հոդվածները կրել են այս կամ այն աստիճանի փոփոխություն, այդուհանդերձ, բարձր դատարանի այդ որոշումը համահունչ է նոր սահմանադրությամբ ամրագրված դրույթներին:

Պատճառաբանելով որոշումը՝ Սահմանադրական դատարանը հիշատակված որոշմամբ, ի թիվս այլ արձանագրումների, փաստել է նաև, որ ՀՀ-ում անձին պատճառված բարոյական վնասի նյութական փոխհատուցման ոչ ներդաշնակ կանոնակարգումները խոչընդոտում են ՀՀ կողմից ստանձնված միջազգային պարտավորությունների բարեխիղճ իրականացմանը:

Սահմանադրական դատարանը գտել է, որ բարոյական վնասի նյութական փոխհատուցման իրավունքը բխում է թե՛ ՀՀ Սահմանադրության և ՀՀ մի շարք օրենսդրական ակտերի դրույթների բովանդակությունից և թե՛ ՀՀ կողմից ստանձնված միջազգային պարտավորություններից, մասնավորապես՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (կից արձանագրություններով) դրույթներից և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավակիրառ պրակտիկայից:

Ավելին, հղում կատարելով ՀՀ դեմ կայացրած մի շարք վճիռների, որոնցով անձին պատճառված բարոյական վնասի դիմաց նյութական փոխհատուցում չտրամադրելը Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիտել է որպես Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (կից արձանագրություններով) համապատասխան դրույթների խախտում, ՍԴ-ն արձանագրել է, որ ՀՀ օրենսդրությամբ բարոյական վնասի նյութական փոխհատուցման ինստիտուտի թերի կանոնակարգումը համահունչ չէ նաև ՀՀ կողմից ստանձնված միջազգային պարտավորություններին:

Նկատի ունենալով ՄԻԵԴ վճիռներով ամրագրված, ինչպես նաև Սահմանադրական դատարանի մեջբերված դիրքորոշումները, Օրենսդրի կողմից 2014թ. Մայիսի 19-ին ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կատարվեցին մի շարք փոփոխություններ և լրացումներ:

Մասնավորապես՝ 17-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրվեց հետևյալ խմբագրությամբ. Վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաև ոչ նյութական վնասը:

Նույն օրենքով նշված հոդվածը լրացվեց 4-րդ մասով, համաձայն որի՝ ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման միայն սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում:

Ավելին, նույն օրենքով ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը լրացվել է 162.1 հոդվածով, որով, ըստ էության, սահմանվեց ոչ նյութական վնասի հասկացությունը և դրա հատուցումը, համաձայն որի՝ ոչ նյութական վնասը ֆիզիկական կամ հոգեկան տառապանք է, որն առաջացել է անձին ի ծնե կամ օրենքի ուժով պատկանող ոչ նյութական բարիքների դեմ ոտնձգող կամ նրա անձնական ոչ գույքային իրավունքները խախտող որոշմամբ, գործողությամբ կամ անգործությամբ:

2015թ. դեկտեմբերի 21-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված օրենքով կատարված փոփոխություններով ու լրացումներով վերը նշված հոդվածում կատարված լրացումներով ու փոփոխությունների համաձայն ամրագրվեց հետևյալը՝

Անձը, իսկ նրա մահվան կամ անգործունակության դեպքում նրա ամուսինը, ծնողը, որդեգրողը, երեխան, որդեգրվածը, խնամակալը, հոգաբարձուն իրավունք ունեն դատական կարգով պահանջելու պատճառված ոչ նյութական վնասի հատուցում, եթե քրեական հետապնդման մարմինը կամ դատարանը հաստատել է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով խախտվել են այդ անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով երաշխավորված հետևյալ հիմնարար իրավունքները.

1) կյանքի իրավունքը.

2) խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքը.

3) անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը.

4) արդար դատաքննության իրավունքը.

5) անձնական և ընտանեկան կյանքը հարգելու, բնակարանի անձեռնմխելիության իրավունքը.

6) մտքի, խղճի և կրոնի ազատության, սեփական կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը.

7) հավաքների և միավորման ազատության իրավունքը.

8) իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը.

9) սեփականության իրավունքը:

Ավելին, նույն հոդվածի 3-րդ կետով հստակ ամրագրվեց, որ եթե դատապարտյալն արդարացվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային կից թիվ 7 Արձանագրության 3 հոդվածով նախատեսված պայմաններում, ապա նա իրավունք ունի դատական կարգով պահանջելու իրեն պատճառված ոչ նյութական վնասի հատուցում (սույն օրենսգրքի իմաստով՝ հատուցում անարդարացի դատապարտման համար):

Իսկ նույն հոդվածի 4-րդ կետով սահմանվեց, որ Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասը հատուցվում է սույն օրենսգրքի 1087.1 հոդվածով, իսկ հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասը՝ 1087.2 հոդվածով սահմանված կարգին և պայմաններին համապատասխան»:

Այս փոփոխություններով ու լրացումներով, ըստ էության, ամբողջացավ քննարկվող ինստիտուտի իրավակարգավորումների այն ողջ շրջանակը, որը սահմանված է թե՛ Կոնվենցիայի հիշատակված արձանագրության թիվ 3-րդ հոդվածով, թե՛ ՄԻԵԴ վճիռներով արտահայտված իրավական դիրքորոշումներով:

Անհրաժեշտ է նշել, որ նույն օրենքով ՀՀ քաղաքացիական Օրենսգիրքը լրացվեց 1087.2 հոդվածով, որով սահմանվեց հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման կարգը

և պայմանները, մասնավորապես, որ դրանք որոշվում են սույն հոդվածին և սույն օրենսգրքի 162.1 հոդվածին համապատասխան:

Նշված հոդվածով ամրագրվել է, որ ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման պետական բյուջեի միջոցների հաշվին՝ անկախ հատուցման ենթակա գույքային վնասից և անկախ վնաս պատճառելիս պաշտոնատար անձի մեղքի առկայությունից:

Օրենքով ամրագրվել է, որ ոչ նյութական վնասի հատուցման չափը որոշում է դատարանը՝ ողջամտության, արդարացիության (equitableness) և համաչափության սկզբունքներին համապատասխան՝ հաշվի առնելով ֆիզիկական կամ հոգեկան տառապանքի բնույթը, աստիճանը և տևողությունը, պատճառած վնասի հետևանքները, վնասը պատճառելիս մեղքի առկայությունը, ոչ նյութական վնաս կրած անձի անհատական հատկանիշները, ինչպես նաև այլ վերաբերելի հանգամանքներ:

Բացի այդ, նույն հոդվածով ամրագրվել են նաև հատուցման չափը, որը չի կարող գերազանցել՝

1) նվազագույն աշխատավարձի հազարապատիկը՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 2 կամ 3 հոդվածներով երաշխավորված իրավունքների խախտման պարագայում, ինչպես նաև սույն օրենսգրքի 162.1 հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում.

2) նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 5 հոդվածով երաշխավորված իրավունքի խախտման պարագայում:

Հատուցման չափը բացառիկ դեպքերում կարող է գերազանցել նախատեսած առավելագույն սահմանը, եթե պատճառված վնասի արդյունքում առաջացել են ծանր հետևանքներ:

Հատկանշական է, որ օրենսդրորեն ամրագրվել է նաև ոչ նյութական վնասի հատուցման պահանջի ներկայացման ժամկետները:

Այսպես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ ոչ նյութական վնասի հատուցման պահանջը դատարան կարող է ներկայացվել ինչպես սույն օրենսգրքի 162.1 հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավունքի խախտումը հաստատելու պահանջի հետ՝ խախտման մասին անձին հայտնի դառնալու պահից մեկ տարվա ընթացքում, այնպես էլ այդ իրավունքի խախտումը հաստատող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, իսկ քրեական հետապնդման մարմնի կողմից խախտումը հաստատվելու դեպքում՝ դրա մասին անձին հայտնի դառնալու պահից ոչ շուտ, քան երկու ամսվա, բայց ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում:

Բացի այդ, մեկ անգամ ևս ցանկանում եմ կարևորել ու ընդգծել, որ այս ինստիտուտի հետ շաղկապված է հետադարձ պահանջի (ռեգրեսի) իրավունքը, որն իր օրենսդրական կարգավորումն է գտել նույն հոդվածի 10-րդ կետով, ըստ որի՝ ՀՀ-ը կամ համայնքը, որը հատուցել է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով պատճառած վնասը, հետադարձ պահանջի (ռեգրեսի) իրավունք ունի այդ անձի նկատմամբ՝ իր վճարած հատուցման չափով:

Հետադարձ պահանջ ներկայացնելու հիմք է հանդիսանում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնատար անձի մեղքի առկայությունը:

Սա կարևորագույն ու առանցքային դրույթ է այն մասին, որ այսուհետ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, կամ դրանց պաշտոնատար անձինք հետադարձ պահանջի (ռեգրեսի)

իրավունքի կիրառման արդյունքում կհատուցեն իրենց որոշման, գործողության կամ անգործության հետևանքով պատճառած վնասը, եթե հիմնավորվի նրանց մեղքը:

Այս ամենին պետք է հավելել նաև հետևյալը. Սահմանադրական վերջին փոփոխություններով հստակեցվեց նաև վնասի հատուցման իրավունքը, որն իր արտացոլումն է գտել 62-րդ հոդվածում, ըստ որի՝

1. Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք: Վնասի հատուցման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

2. Եթե հանցանք կատարելու համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված անձն արդարացվել է այն հիմքով, որ նոր կամ նոր երևան եկած որևէ հանգամանք ապացուցում է նրա դատապարտման ոչ իրավաչափ լինելը, ապա այդ անձն ունի օրենքին համապատասխան հատուցում ստանալու իրավունք, եթե չի ապացուցվում, որ այդ հանգամանքի ժամանակին բացահայտումը լիովին կամ մասամբ կախված էր տվյալ անձից:

Հիշատակված իրավակարգավորումներից զատ, անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ մի շարք նորմատիվ իրավական ակտերով նախատեսված են դրույթներ՝ պատճառված բարոյական վնասի, ինչպես նաև դրանց նյութական փոխհատուցման վերաբերյալ:

Ակնառու դարձնելու համար անհրաժեշտ ենք համարում ընդգծել դրանք:

Մասնավորապես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 268-րդ հոդվածի համաձայն՝ Տուժող համարվում է այն անձը, որին վարչական իրավախախտման հետևանքով բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս է պատճառվել:

Առավել ընդգրկուն ընդգծում է առկա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, մասնավորապես՝ 6-րդ հոդվածի 45-րդ կետում, որում «վնաս» եզրույթը դիտարկվում է որպես «դրամական չափման ենթակա բարոյական, ֆիզիկական, գույքային վնաս»: Իսկ նույն օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Տուժող է ճանաչվում նաև այն անձը, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը:

Բացի այդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝ 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչարարությամբ ֆիզիկական անձի ազատությունը սահմանափակելու, նրա անձեռնմխելիությունը, բնակարանի անձեռնմխելիությունը, անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը խախտելու, նրա պատիվը, բարի համբավը կամ արժանապատվությունն արատավորելու միջոցով ոչ գույքային վնաս պատճառելու դեպքերում այդ անձն իրավունք ունի պահանջելու դրամական միջոցներով հատուցում կամ առաջացած հետևանքների վերացում՝ պատճառված ոչ գույքային վնասին համարժեք չափով:

Որպես ասվածի ամփոփում կցանկանայի ընդգծել, որ, ինչ խոսք, «Բարոյական վնասի հատուցման» ինստիտուտի ուղիղ ու ամբողջական ներդրումը համահունչ է ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով և դրանց կից արձանագրություններով ամրագրված դրույթներին:

Ավելին, ՀՀ դեմ հրապարակված ՄԻԵԴ վճիռները նույնպես էական նշանակություն են ունեցել իրավունքի այս ոլորտի զարգացման ներկայիս մակարդակի վրա:

Թեև այս ամենին, իմ կարծիքով, ինտիտուտն այս պահին կայանալու խնդիր ունի, քանի որ, ըստ էության, դեռևս բացակայում է դատական պրակտիկան, իսկ դրա հիմքերի ճիշտ կառուցումը, կայացումն ու ամրապնդումը շատ կարևոր խթան կհանդիսանա ինստիտուտի հետագա զարգացման համար:

Հեղինակ՝ «Փաստինֆո»

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })